



«TRAVEL BOX» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. TB02
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. Ի՞նչ է «TRAVEL BOX» ԾՐԱԳԻՐԸ

«TRAVEL BOX» ծրագիրն արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրություն է՝ նախատեսված բազմակի ուղևորությունների մեկնող անձանց համար:

2. Ո՞վ ԿԱՐՈՂ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼ

Ծրագրի շրջանակներում ապահովագրվում է մինչև 85 տարեկան ցանկացած ֆիզիկական անձ:

3. Ի՞նչ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ

«TRAVEL BOX» ծրագրի շրջանակներում հատուցման ենթակա են՝

- անհետաձգելի (շտապ) բժշկական ծառայության ծախսերը,
- բուժօտրանսպորտային ծառայությունների ծախսերը,
- հայրենադարձության հետ կապված ծախսերը,
- ծախսերը, որոնք իրականացվել են Ապահովագրական պատահարի մասին Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին տեղեկացնելիս:

4. Ի՞նչ ԾԱԾԿՈՒՅԹ Է ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ապահովագրական գումար՝ **30 000 ԵՎՐՈ**

Ապահովագրության տարածք՝ **ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀ**

1 տարվա ընթացքում ուղևորությունների քանակ՝ **ԱՆՄԱՀՄԱՆԱՓԱԿ**

Ապահովագրության ժամկետ	Տարեկան ապահովագրավճար
1 տարվա ընթացքում <u>15</u> օր	4 000 ՀՀ դրամ
1 տարվա ընթացքում <u>30</u> օր	6 000 ՀՀ դրամ
1 տարվա ընթացքում <u>60</u> օր	9 000 ՀՀ դրամ
1 տարվա ընթացքում <u>90</u> օր	12 000 ՀՀ դրամ

Վերոնշյալ ապահովագրավճարների վրա կիրառվող գործակիցներ**

1. 65-70 տարեկան անձի ապահովագրության դեպքում բազային ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է 2 գործակից,



- 2. 71-75 տարեկան անձի ապահովագրության դեպքում բազային ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է 2,5 գործակից,
- 3. 76-79 տարեկան անձի ապահովագրության դեպքում բազային ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է 3 գործակից,
- 4. 80-85 տարեկան անձի ապահովագրության դեպքում բազային ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է 4 գործակից:

5. ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- 5.1. Ապահովագրվող անձի անձը հաստատող փաստաթուղթ,
- 5.2. Պայմանագիր կնքող անձի անձը հաստատող փաստաթուղթ (եթե վերջինս Ապավագրվող անձը չէ):

6. ԻՆՉ ԱՆԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Շտապ բժշկական օգնություն ստանալու համար անհրաժեշտ է կապ հաստատել մեր գործընկեր «**Էքսպրեսս Ասսիսթ Ցենտր**» աջակցող կազմակերպության հետ՝ նշված շուրջօրյա գործող հեռախոսահամարներից մեկով.

Հեռ.	+7 495 539 30 71
WhatsApp	+7 916 430 39 19
Viber	+7 916 430 39 19

7. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 7.1. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ»-ի ապահովագրության պայմանագիրը ընդունվում է աշխարհի բոլոր դեսպանատների և հյուպատոսությունների կողմից,
- 7.2. 65-ից բարձր տարիքի անձանց համար ապահովագրավճարը չի ավելանում, եթե ընտրված է միայն հայրենադարձության հետ կապված ծախսերի ռիսկը, որը սահմանվում է համաձայն Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրության պայմանների 4.1.3.3. և 4.1.3.4 կետերի:
- 7.3. Չհատուցվող գումար չի կիրառվում,
- 7.4. Մենք ապահովում ենք շուրջօրյա և բազմալեզու սպասարկում:

Սույն ապահովագրության ծրագիրը կարգավորվում է Ընկերության խորհրդի կողմից 29.04.2016թ. թիվ 33 որոշմամբ հաստատված Պ750-02-04 «Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրության պայմաններ»-ով: